ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/698-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-780-06.11.2020-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686, 094-698344

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-780-06.11.2020-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է ֆիզիկական անձանց կողմից դրոշմանիշային վճարների վճարման համահարթ եղանակից անցում կատարել պրոգրեսիվ համակարգի: Գործող օրենքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար աշխատանքային պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք և Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք, ինչպես նաև աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք և նույն պայմանագրերով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, վճարում են դրոշմանիշային վճար՝ 1000 դրամի չափով: Նախագծով առաջարկվում է կատարել դրոշմանիշային վճարների վճարման չափերի փոփոխություն՝ սահմանելով աշխատանքային և աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով աշխատող ֆիզիկական անձանց դրոշմանիշային վճարների վճարման համար 1000 դրամ, 2000 դրամ, 3000 դրամ, 6000 դրամ և 12000 դրամ գումարների չափեր՝ ըստ հարկման բազաների մեծությունների համապատասխան միջակայքերի:

Նախագծով անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար օրենքով սահմանված դրոշմանիշային վճարի չափը թողնվում է անփոփոխ:

Այդ կապակցությամբ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն էր ներկայացրել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Կ-820-23.12.2020-ՊԱ-011/0), որով նույնպես առաջարկվում էր դրոշմանիշային վճարների վճարման համահարթ եղանակից անցում կատարել պրոգրեսիվ համակարգի և առավել համակարգված լուծում է տրվում առկա խնդիրներին: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում ընդունվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-502-Ն օրենքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի քննարկումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2021 թվականի N 22 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առող-ջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-780-06.11.2020-ՊԱ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-780-06.11.2020-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2015 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են հետեւյալ դրույքաչափերով.

Մինչեւ 150000 ՀՀ դրամ հարկման բազայի դեպքում	1000 ՀՀ դրամ
150000-ից մինչեւ 300000 ՀՀ դրամ հարկման բազայի դեպքում	2000 ՀՀ դրամ
300-ից մինչեւ 500000 ՀՀ դրամ հարկման բազայի դեպքում	3000 ՀՀ դրամ
500-ից մինչեւ 1 մլն ՀՀ դրամ հարկման բազայի դեպքում	6000 ՀՀ դրամ
1 մլն ՀՀ դրամ կամ ավելի հարկման բազայի դեպքում	12000 ՀՀ դրամ

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1 մասով.

«1.1 Անհատ ձեռնարկատերերը եւ նոտարները յուքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար դրոշմանշային վճարը վճարում են 12000 ՀՀ դրամ գումարի չափով։»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների մասին» օրենքով կարգավորվում են մարտական գործողությունների հետեւանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ սահմանվում են հատուցման հիմնադրամի ստեղծման եւ գործունեության կարգն ու պայմանները:

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը ստեղծվել է 2017 թվականին եւ գործունեության նպատակը յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքին, ինչպես նաեւ մարտական գործողությունների ընթացքում վիրավորված զինծառայողներին հատուցումների տրամադրումն է:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար աշխատանքային պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք եւ ՀՀ տարածքում աշխատող ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք, ինչպես նաեւ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս եկամուտ ստացող՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք եւ նույն պայմանագրերով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, վճարում են դրոշմանշային վճար՝ 1000 դրամի չափով :

Հատուցումները տրամադրվում են ինչպես զոհվելու կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում, այնպես էլ՝ առողջությանը պատճառված վնասի հետեւանքով: Կախված զինվորական ծառայության աստիճանից՝ զինծառայողների ընտանիքներին ընդհանուր առմամբ տրամադրվում է 58 միլիոն դրամից մինչեւ 85 միլիոն դրամ: Եթե զինծառայողը ունի երեք կամ ավելի երեխա կամ մինչեւ 23 տարեկան ցերեկային ուսուցմամբ սովորող զավակներ կամ հաշմանդամ երեխաներ, ապա ամսական հավասար վճարին ավելացվում է ամսական լրացուցիչ 100 հազար դրամ:

Հիմնադրամի գործունեության շուրջ 4 տարիների ընթացքում հավաքագրվել է ավելի քան 32 միլիարդ դրամ, որից շուրջ 27 միլիարդը՝ պարտադիր վճարումների միջոցով:

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը եւ ակնկալվող արդյունքը

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ստորաբաժանումների կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունները եւ այն հանգամանքը, որ Ադրբեջանի զինված ուժերի ձեռնարկած գործողությունների արդյունքում առկա է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժելու անմիջական վտանգ, հիմք հանդիսացան Կառավարության որոշմամբ ՀՀ ողջ տարածքում ռազմական դրություն հայտարարելու համար:

Ադրբեջանի կոմից սանձազերծված ռազմական գործողությունները ուղեկցվում են անօդաչու թռչող սարքերի, զրահատեխնիկայի, կենդանի ուժի եւ այլ ստորաբաժանումների կիրառմամբ, ինչի արդյունքում օրական զոհվում եւ տարբեր աստիճանների վիրավորումներ են ստանում մեծ թվով զինծառայողներ:

Բնականաբար, ստեղծված իրավիճակում կտրուկ ընդլայնվելու է Հիմնադրամի շահառուների շրջանակը եւ հատուցումների պատշաճ տրամադրման համար անհարժեշտ է լինելու զգալի չափով հավելյալ ֆինանսական ռեսուրսների ներգրավում:

Հատուցման գումարի մի մասը (5000000 դրամից մինչեւ 10000000 դրամ) տրամադրվում է միանվագ՝ հատուցման դեպքը տեղի ունենալուց հետո՝ մի քանի աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացածը՝ ամսական հավասար մարումներով՝ 20 տարվա ընթացքում: Հաշվի առնելով հատուցման տրամադրման կարգը՝ մասնավորապես հատուցման գումարի մի մասի միանվագ տրամադրման բաղադրիչը, ապա կանխատեսելի է, որ առաջիկայում Հիմանդրամի կողմից տրամադվող ընդհանուր հատուցման գումարը զգալիորեն ավելանալու է:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձանց կողմից դրոշմանշային վճարների վճարման համահարթ եղանակից անցում կատարել պրոգրեսիվ համակարգի, ինչը թույլ կտա զգալի չափով ավելացնել հավաքագրվող դրամական միջոցները:

Այսպիսով, նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է, որ դրոշմանշային վճարների պրոգրեսիվ եղանակով վճարման արդյունքում զգալի չափով կավելանան Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի ֆինանսական ռեսուրսները , ինչն էլ ստեղծված պայմաններում կնպաստի Հիմնադրամի կողմից ստանձնած պարտավորությունների եւ նպատակների պատշաճ իրագործմանը: